ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼՈՅԱՆ ԼԵՎՈՆ ԳԱԳԻԿԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԴԱՏԱՒՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ . ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ԵՐԵՎԱՆ – 2025

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ СУДЕБНОЙ ВЛАСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ СУДЕБНО-ПРАВОВЫХ РЕФОРМ: ТЕОРЕТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание учёной степени кандидата юридических наук по 12.00.01» – «Теория и история государства и права, история политико-правовых учений»

ЕРЕВАН – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գառնիկ Հրաչիկի Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր **Հրայր Վարդանի Թովմասյան**
իրավ. Գիտ.թեկ. **Արմեն Լևոնի Ասատրյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի Պետական Համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025թ.-ի նոյեմբերի 1-ին, ժամը 11:00- ին՝ Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Իրավագիտության թիվ 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի սեպտեմբերի 30 -ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու **Ջ.Հ. Հայրապետյան:**

Тема диссертации утверждена в
Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Гарник Грачикович Сафарян**

Официальные оппоненты: доктор юридических наук, Грайр Варданович Товмасян
кандидат юридических наук Армен Левонович Асатрян

Ведущая организация: Ереванский государственный университет

Защита состоится 01-ого ноября 2025 года в 11:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете. (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина, 123).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Государственного образовательного учреждения вышего профессионального образования <<Российско-Армянского университет>>.

Автореферат разослан «30» сентября 2025 г.

Учёный секретарь специализированного совета,
кандидат юридических наук **Дж.А. Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը. սույն ատենախոսական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ՀՀ դատական իշխանության արդի իրավիճակով: Այս կապակցությամբ կարելի է արձանագրել, որ ՀՀ դատաիրավական ոլորտում տարիներով կուտակված հիմնախնդիրները հնարավոր կլինի լուծել միայն խորքային և համակարգված բարեփոխումների արդյունքում:

Մեր կարծիքով, դատաիրավական ոլորտում որակական լուրջ փոփոխություններ ապահովելու համար նախ և առաջ պետք է գնահատել ներկայիս իրավիճակը, վերլուծել արդարադատության առկա խնդիրները և առաջարկել գիտականորեն հիմնավորված մոտեցումներ ու գործնական առաջարկություններ դրանց համարժեք լուծումներ տալու համար (14, 18):

Առկա վիճակը շտկելու համար անհրաժեշտ է իրականացնել համակարգված և համալիր փոփոխություններ: Հետևաբար, դատական համակարգային փոփոխությունների համար հատվածական լուծումներ գտնելը սխալ է:

Դատական համակարգը ազգային պետականության կարևորագույն հենասյուներից է, քանզի բոլոր խնդիրներն ու վեճերը, որոնք կարող են առաջանալ քաղաքական և սոցիալական հարթության մեջ, նույնիսկ օրենսդիր կամ գործադիր իշխանության մարմինների առնչությամբ, տնտեսավարողների և բիզնեսի ոլորտում, կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում, մինչև անգամ կենցաղային խնդիրները, ի վերջո, իրենց լուծումն են գտնում արդարադատության մեջ՝ դատարաններում:

Այս առումով, գտնում ենք, որ դատական համակարգը կայացած ժողովրդավարություն ունենալու ճանապարհին նույնքան կարևոր ինստիտուտ է, որքան օրենսդիր մարմինը կամ արդար ու ազատ ընտրությունները: Այս կապակցությամբ նշենք, որ ներկայումս մեր պետությանը հաջողվել է միջազգային չափանիշներին համապատասխան անցկացնել արդար ու թափանցիկ ընտրություններ, ձևավորել լեգիտիմ օրենսդիր և գործադիր իշխանություններ, սակայն չի հաջողվել ձևավորել նույնքան լեգիտիմ, անկախ ու վստահելի դատական համակարգ (6,8): Մեր կարծիքով, այս դժվարին խնդիրը լուծելու համար համակարգված մոտեցում է անհրաժեշտ, որը պետք է զերծ լինի ավելորդ շտապողականությունից և վիրահատական (հատվածային) լուծումներից:

Այսօրվա դրությամբ, մեր երկրի առջև ծառացած մարտահրավերներն են՝ հետպատերազմյան հետևանքների վերացում, օրինականության, ժողովրդավարական արժեքների, անկախ դատական իշխանության, ազատ ու արդար տնտեսական մրցակցության ապահովում:

Ազգային դատական համակարգի համակարգային բարեփոխումների մասին է վկայում նաև «Հայաստանի Հանրապետության դատական և

իրավական բարեփոխումների 2022–2026 թվականների ռազմավարություն»-ը՝ հաստատված ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի №1133-L որոշումով: Ըստ այդ «Ռազմավարության» դատաիրավական բարեփոխումները պետական իշխանության առաջնահերթություններից են, որոնք ուղղված են դատական համակարգի անկախության, անկողմնակալության և դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը, դատարանների ծանրաբեռնվածության թեթևացմանը, հանրային ծառայությունների մատուցման որակի բարելավմանը, քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարելավմանը, էլեկտրոնային արդարադատության միասնական կառավարման համակարգի ներդրմանը և այլ քայլեր, որոնք էապես անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության դատաիրավական համակարգի զարգացման համար (4,7):

Այսպիսով, ընդհանրացնելով նշենք, որ ազգային պետականության զարգացման արդի փուլում խիստ կարևորվում է պետաիրավական ինստիտուտների վերարժևորումը և վերաիմաստավորումը, որոնցում առաջնահերթություններից է դատական իշխանության հետագա կատարելագործման հետ կապված հիմնախնդիրներին համարժեք լուծումներ գտնելու անհրաժեշտությունը: Հետևաբար, օբյեկտիվ անհրաժեշտություն և առավել արդիական է ներկայանում դատական իշխանության հրատապ հիմնախնդիրների գիտական հետազոտությունը:

Վերոնշված աշխատություններից սույն հետազոտությունը հիմնականում տարբերվում է հետևյալ առանձնահատկություններով. նախ՝ ախտորոշվում է ներկայիս դատական իշխանության մարմինների համակարգի առկա վիճակը և, երկրորդ կանխորոշվում է դատական իշխանության համակարգի կատարելագործման և արդյունավետության բարձրացման ուղիները և հետագա զարգացման միտումները (24,48,52):

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները կայանում է սկզբունքորեն նոր համալրված և տեսականորեն հիմնավորված հայեցակարգի մշակումը դատական իշխանության՝ որպես հատուկ սոցիալ-իրավական ինստիտուտի, դատական իշխանության խնդրահարույց հարցերի տեսական հիմնավորումներով, իրավունքի նորմերի, ազգային և միջազգային նորմերի ու դատական նախադեպերի վրա հիմնված սոցիալ-իրավական վեճերի լուծման ամենանարդյունավետ գործիքակազմի մասին:

Բացի դրանից, **ուսումնասիրության նպատակը** ներառում է դատական իշխանությանը վերաբերող իրավունքի և պետության տեսության մեջ հասկացութային կատեգորիալ ապարատի նորացման անհրաժեշտության հիմնավորումը, օրենսդրության և դատական պրակտիկայի կատարելագործման համար գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակումը և արդյունավետության բարձրացումը:

Նշված նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ տեսական և կիրառական խնդիրների լուծման անհրաժեշտությունը.

1. վերլուծել դատական իշխանության սոցիալական բնույթի պարզաբանման, «դատական իշխանություն» հասկացության մշակման, դրա գործառույթների վերլուծության, պետական իշխանության մեխանիզմում, հասարակության քաղաքական սոցիալ-տնտեսական կյանքում դատական իշխանության տեղի և դերի սահմանման միջոցով,
2. բացահայտել դատական համակարգի, ըստ իրավազորության տեսակների ատյանների (դատարանների) միմյանցից անկախության հիմնախնդիրը,
3. վերհանել դատարանի որպես պետական մարմնի, անկախության ասպեկտները դատարանի ներկառուցվածքային տարրերի փոխհարաբերություններում,
4. բացահայտել դատական իշխանության մարմինների արտաքին և ներքին անկախության առումները,
5. մշակել գիտականորեն հիմնավորված առաջարկություններ դատական իշխանության մարմինների կառուցվածքային (ինստիտուցիոնալ) կատարելագործման և արդյունավետության բարձրացման համար:

Դատական իշխանության նկատմամբ գիտական հայացքների կառուցումն ու հիմնավորումը, անշուշտ, ենթադրում է տրամաբանորեն համաձայնեցված և կառուցակարգված մտահայեցողական կառուցվածքի ստեղծում, որի հիմքը՝ նոր գաղափարների, տեսական ենթադրությունների հետ մեկտեղ կկազմեն ընդհանուր ընդունված իրավաբանական կատեգորիաները:

Հետազոտության օբյեկտը: Ուսումնասիրության օբյեկտն է դատական իշխանությունը, այսինքն դատարանի կողմից իրականացված արդարադատության ակտերի, նրանց վրա դրված այլ գործառույթների իրագործման հետևանքով, ինքնատիպ հասարակական հարաբերությունների համադրությունը:

Հետազոտության առարկան ներառում է՝

– դատական իշխանության կառուցվածքի, ապարատի և գործառության մասին ժամանակակից հայրենական և արտասահմանյան աղբյուրների հետազոտում,
– իրավական պետությունում դատական իշխանության բովանդակության և իրագործման համատեսական հիմքերի վերլուծություն,
– դատարանի կողմից՝ սոցիալական կոնֆլիկտների լուծման արդյունքում ծագած հասարակական հարաբերությունների էության և բովանդակության բացահայտում:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները. հետազոտության ընթացքում օգտագործվել է ինչպես ընդհանուր աշխարհայացքային, այնպես էլ կոնկրետ կամ հատուկ մեթոդները, մասնավորապես՝ համընդհանուր դիալեկտիկայի օրենքներն ու կատեգորիաները, իրավահամեմատական,

իրավաբանական վերլուծության, համակարգային-կառուցվածքային վերլուծության, սոցիոլոգիական մեթոդները:

Հետազոտության տեսական և նորմատիվ հենքը. սույն հետազոտության տեսական հիմք են իրավունքի տեսության, սահմանադրական իրավունքի, դատական իրավունքի, քրեական դատավարության, քաղաքացիական դատավարության, դատարակազմության, արդարադատության առանձին սկզբունքներին նվիրված վերոհիշյալ հեղինակների և այլոց աշխատությունները և ատենախոսությունները, գիտական հոդվածները:

Ատենախոսության նորմատիվ հիմքն են՝ ՀՀ Սահմանադրությունը, Դատական օրենսգիրքը, Մարդու իրավունքների հիմնարար ազատությունների և պաշտպանության մասին եվրոպական Կոնվենցիան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրության և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերը, դատաիրավական ռազմավարական ծրագրերը և արդարադատության վերաբերյալ միջազգային փաստաթղթերը:

Գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթը, ամենից առաջ, արտահայտվում է դատական իշխանության էության, բովանդակության և իրացման ձևի հետ՝ կապված հիմնահարցերի համալիր ուսումնասիրության մեջ: Հայրենական իրավագիտության մեջ նոր օրենսդրության պայմաններում առաջին փորձերից մեկն է, որտեղ դատական իշխանությունը դիտարկվում է ոչ միայն անկախ և պետական իշխանության ինքնուրույն ճյուղ, այլև անկախ սոցիալ-իրավական ինստիտուտ, որն ունի իր կարգավորման օբյեկտը և առարկան: Սույն հետազոտությունում դատական իշխանությունը դիտարկվում է ոչ միայն որպես դատարան (դատական համակարգի) ունակություն կատարելու որոշակի գործառույթներ՝ արդարադատություն, վերահսկողություն, իրավաստեղծ գործունեություն, կազմակերպական, գաղափարական, իրավապաշտպան, և այլն, այլև զարգացած հասարակությանը հարիր հանրային իրավական հաստատություն (արդարդատության պալատ) որում լուծվում են ոչ միայն սոցիալական վեճերը, այլև իրավունքի և օրենքի գերակայության և օրինականության հետ կապված հարցերը: Աշխատանքում հանգամանորեն վերլուծության են ենթարկվել նաև դատական իշխանության որպես հատուկ սոցիալական ինստիտուտի բնույթը, պետության կառուցակարգում հասարակական կյանքի կառավարման ոլորտում նրա տեղն ու դերը:

Սույն ատենախոսական հետազոտությունն ունի առավել պրոսպեկտիվ ուղղվածություն, որը կոչված է գիտականորեն հիմնավորված կերպով կանխորոշելու անկախ դատական իշխանության կայացման հիմնական ուղղությունները հայ հասարակայնության ու պետականության զարգացման արդի փուլում:

Գիտական նորույթի դրվագներ են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Դատական իշխանությունը հանրային-պետական իշխանության գործունեության հատուկ տեսակ է, որը կարգավորվում է դատական իրավունքի նորմերով, ողջախոհության, արդարության և բանականության կանխադրույթներով և որոնց ծագումն ու գոյությունը պայմանավորված են տվյալ սոցիումի պատմականորեն ձևավորված առանձնահատկություններով և ավանդույթներով:
2. Դատական իշխանությունը կարող է դիտարկվել որպես պետական իշխանության ինքնուրույն տեսակ այն դեպքում, երբ հասարակությունում առանձնացված են օրենսդիր և գործադիր իշխանությունները և այդ փոխադարձ զսպումների և հակակշիռների համակարգում դատական իշխանությունը հանդես է գալիս նաև պետական-քաղաքական իշխանություների իրավական սահմանափակման գործոն:
3. Դատարանի սոցիալ-քաղաքական նշանակությունը դրսևորվում է հետևյալ կանխադրույթներում.

   ա) դատական իշխանությունը պետության քաղաքական ռեժիմի խտացված արտահայտությունն է.

   բ) դատարանը պետական իշխանության ինքնասահմանափակման միջոց է:

Դատական իշխանության սոցիալ-քաղաքական նշանակությունը պայմանավորված է նաև տվյալ պետությունում անձի, հասարակության և պետության սահմանադրահիրավական կարգավիճակով և միմյանց հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթով, հանրային և մասնավոր շահերի հարաբերակցության ընկալմամբ:

4. Դատավորը որպես արդարադատություն իրականացնող սուբյեկտ իր պահվածքով պետք է առաջացնի այնպիսի իրավիճակներ կամ պետք է ձեռնպահ մնա այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել, վնասել դատավորի (դատարանի) անկախությունը, անաչառությունը և հեղինակությունը: Այս իմաստով, անկախությունը (արտաքին և ներքին) ոչ միայն դատավորի համար երաշխավորված կարգավիճակ է, այլ նաև պարտականություն: Հետևաբար դատավորի անկախությունը ենթադրում է պատասխանատու վերաբերմունք իր «առաքելության» նկատմամբ և պարտավորություն հասարակության ու օրենքի առաջ՝ որպես արդարության արդարության կենդանի կերպար և արդարադատություն իրականացնող բացառիկ սուբյեկտ:
5. Դատական իշխանության անկախությունը իրավական պետությունում արդարադատության գոյության օբյեկտիվորեն անհրաժեշտ նախապայման է: Այն ենթադրում է, որ դատական վարույթում առկա գործով որոշակի իրավական դիրքորոշում ձևավորելիս յուրաքանչյուր

դատավոր ազատ պետք է լինի անհարկի միջամտություն հանդիսացող արտաքին և ներքին ցանկացած ազդեցությունից:

6. Դատարանի և դատավորի անկախությունը երաշխավորող իրավական ակտերը վերաբերում են արժեքների վերաբերյալ օբյեկտիվ որոշումներ կայացնելուն: Այս առումով ժողովրդավարական իրավական պետությունում դատավոր կարող է լինել միայն այն անձը, ով անկախ է ինստիտուցիոնալ-կազմակերպական, առարկայական, անձնական առումներով, ինչպես նաև կոնկրետ գործով պայմանավորված նրա մասնագիտական պատրաստվածության մակարդակով: Հետևաբար, դատավորի անկախությունը, և՛ առարկայականը, և՛ անձնականը, ինքնին երաշխիք չէ, այլ հոգեկեցվածք, որը պահանջում է շարունակաբար քննել սեփական մասնագիտական ինքնաքննկալումը և իր վրա դրված պատասխանատվությունը:
7. Դատական իշխանությունը լեգիտիմացնում է իրավական պետության նկատմամբ քաղաքացիների վստահությունը: Վստահությունը միշտ մի տեսակ «կանխավճար» է մի բանի համար, որն անհայտ է. մի վիճակ է իմանալու և չիմանալու, գիտակցականի և ենթագիտակցականի միջև: Հետևաբար, քաղաքացիական հասարակության վստահությունը դատական իշխանության նկատմամբ պայմանավորված է արդարադատության որակից, ճշմարիտ, համարժեք և կանխատեսելի դատական ակտեր ընդունելիս, որպես միակ հնարավոր և հիմնավոր լուծումներ կայացնելիս:
8. Դատական իշխանությունը իրական է և գոյություն ունի միայն իր գործառության իրավասության շրջանակներում, միաժամանակ կրում է հանրային իրավական և մասնավոր իրավական բնույթ, արտահայտվում է իրավակիրառ, իրավամեկնող և իրավաստեղծ ոլորտներում, գոյություն չունի իրավական կարգավորումից դուրս, հանդիսանում է իրավունքի կենդանի աղբյուր:
9. Դատական իշխանության զարգացման տեսանկյունից պետք է «Դատական օրենսգրքի» սահմանադրական օրենքում ամրագրվի դատարանի սոցիալական նշանակությունը, նրա արբիտրի դերը պետական իշխանության մարմինների միջև ծագած իրավաքաղաքական հարցերի կարգավորման խնդրում: Այս իմաստով անհրաժեշտ է նաև ներդնել «սոցիալական ներազդեցության» ինստիտուտի գաղափարը, որը բարդ կառուցակարգ է և որի համաձայն արդարադատության իրականացման ոլորտում պատասխանատվություն է նախատեսվում օրենսդիր և գործադիր մարմինների համար, որովհետև յուրաքանչյուր օրենսդրական նախաձեռնության սուբյեկտը պետք է հիմնավորի ընդունվելիք իրավական ակտի իրական և արդյունավետ գործադրումը:

Ուսումնասիրության գիտական և գործնական նշանակությունը: Ուսումնասիրության գիտական նշանակությունը նրանում է, որ ատենախոսական մենագրության մակարդակով համակողմանի վերլուծության են ենթարկվել դատական իշխանության հետ առնչվող համալիր հիմնահարցեր: Այս իմաստով աշխատանքն ունի ոչ միայն տեսական-ճանաչողական, այլև գործնական- կիրառական նշանակություն՝ դատական իշխանության մարմինների աշխատակիցների համար. ինչպես նաև այն կարող է օգտագործվել իրավունքի տեսության, դատական իրավունքի, և հատուկ դասընթացների ուսումնասիրության ժամանակ:

Ուսումնասիրության արդյունքների փորձարկումը: Ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետահիրավական հետազոտությունների՝ բաժնում, որտեղ իրականացվել է հետազոտության արդյունքների փորձարկումը, գրախոսությունը և երաշխավորումը հրապարակային պաշտպանության:
Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի մենագրությունում և բազմաթիվ գիտական հրապարակումներում:
Ատենախոսական աշխատանքի կառուցվածքը. Սույն ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են վեց ենթագլուխ, ամփոփումից, նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածականում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, բացահայտված է հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության նպատակը, գիտական վարկածը, նպատակից և գիտական վարկածից բխող հետազոտության խնդիրները, առարկան, օբյեկտը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը:

Ատենախոսության «ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ» խորագրով առաջին գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին գլխի՝ **«Դատական իշխանության հասկացությունը, էությունը և բնութագրական հատկանիշները»** խորագրով առաջին ենթագլխում լուսաբանված են դատական իշխանությունը և դատական գործունեությունը որպես առանձին և հարակից կատեգորիաներ, որոնք կոչված են ապահովելու օրինականությունը, անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ

պաշտպանությունը, ինչպես նաև հասարակության կայուն և բնականոն գործառնությունը:

«**Դատական իշխանության ընդհանուր հայեցակարգային մոտեցումները**» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված է դատական իշխանության ժամանակակից հայեցակարգը, որը ենթադրում է, որ դատական իշխանությունը պետական իշխանության անկախ և ինքնավար ճյուղ է, որն իրավունքի ուժով լուծում է սոցիալական վեճերը, հետևում է նորմատիվ և իրավակիրառ ակտերի սահմանադրականությանն ու օրինականությանը, հաստատում է իրավաբանական նշանակության փաստերը, լուծում է պետական մարմինների իրավասությունների հետ կապված վեճերը, ինչպես նաև վերացնում է իրավական բացերը, անորոշությունները, հակասությունները՝ իր նորմաստեղծ, նորմամեկնաբանող իրավական դիրքորոշումներով և նախադեպային նշանակության որոշումներով: «**ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ**» խորագրով ատենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

«**ՀՀ դատական իշխանության գործառութային լիազորությունները**» խորագրով առաջին ենթագլխում ներկայացված է դատական իշխանության վերոնշված գործառութային լիազորությունների հստակ ու արդյունավետ իրականացնելու համար համապատասխան իրավական և կազմակերպչական անհրաժեշտ նախադրյալները: Դատահիրավական բարեփոխումների համատեքստում դրանց բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը կնպաստի դատական իշխանության անկախության ամրապնդմանը և արդարադատության արդյունավետության (որակի) բարձրացմանը: «**ՀՀ դատական իշխանության անկախության երաշխիքների համակարգը**» խորագրով երկրորդ ենթագլուխը ներառում է ազգային համակարգերի միջև գոյություն ունեցող որոշակի տարբերությունները: Նրանցից ոմանք, ըստ երևույթին, բավական դժվար են պատկերացնում, որ ինչ-որ անկախ մարմին կարող է փոխարինել քաղաքական իշխանություններին և ինքնուրույն կատարել նշանակումներ: Սակայն նման դեպքերում անկախ մարմնի կողմից տրված խորհրդատվությամբ կամ կարծիքով բավարարվելու գայթակղությունը կարող է ունենալ հրահրիչ բնույթ: Իսկ պրակտիկայում փաստորեն կլինի ոչ պարտադիր գործոն նշանակումներ կատարող քաղաքական իշխանությունների համար: Հռչակագրի ոգուն համաձայն, անկախ մարմնի խորհրդատվությունը կամ երաշխավորությունը կարող է երաշխիք հանդիսանալ միայն այն դեպքում, երբ ընդհանուր առմամբ ունենում է գործնական կիրառություն: Քաղաքական կամ վարչական այն մարմինը, որը չի հետևի նման խորհրդի կամ կարծիքի, նվազագույնը պարտավոր է տեղյակ պահել այդ մերժման պատճառների մասին:

Ատենախոսության՝ «ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՐԱԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» խորագիրը կրող երրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

«ՀՀ դատական իշխանության համակարգի վիճակը հասարակության զարգացման արդի փուլում» խորագրով առաջին ենթագլխում շարադրված է դատական համակարգի՝ վերոնշյալ և բազմաթիվ այլ խնդիրներին արձագանքելու նպատակով՝ անհրաժեշտ է խնդիրները համապարփակ կերպով վեր հանել և դրանց հիման վրա մշակել դատական և իրավական բարեփոխումների ռազմավարական նոր ծրագիր, որը կներառի կարճաժամկետ ու հրատապ, ինչպես նաև երկարաժամկետ խնդիրներ և դրանց համարժեք լուծումների իրատեսական միջոցառումների հստակ ու կոշտ պլան-հանձնարարական: Եվ այդ պլան-հանձնարարականի վերջնանպատակն է լինելու դատարանների և արդարադատության համակարգին առնչվող պետական ինստիտուտների վերակառուցումը անկախության և հաշվետվողականության չափանիշներով, ինչն անհրաժեշտ է ժողովրդավարական պետության զարգացման համար: Դատական համակարգը պետք է լիարժեք անկախանա, որպեսզի կարողանա դառնալ հավասարակշռող ուժ իշխանության մյուս ճյուղերին:

«**Տեսական-հայեցակարգային մոտեցումները արդարադատության կատարելագործման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ»** խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված է, որ դատաիրավական բարեփոխման խնդիրներից մեկն էլ, սահմանադրաիրավական կարգավորումներում առկա որոշակի բացերի վերացումն է: Նման խնդիրներ են բացահայտվել նաև, սահմանադրական արդարադատության ոլորտում: Այսպես, ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում Սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերի լուծման հնարավորություն: Թեև նման վիճակը դեռևս չի հանգեցրել գործնական դժվարությունների, սակայն, հաշվի առնելով սույն բարեփոխման արդյունքում սահմանադրական մարմինների քանակի ավելացման հնարավորությունը և դրանց լիազորությունների հարաբերակցության հավանականությունը, ապագայում ճգնաժամային իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է ընդլայնել սահմանադրական դատարարանի լիազորությունների շրջանակը՝ հնարավորություն տալով լուծել նաև սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների առնչությամբ առաջացող սահմանադրական վեճերը:

Եվ վերջապես, նշենք, որ դատաիրավական բարեփոխումները ինքնանպատակ չեն, դրանք ուղղված պետք է լինեն անկախ դատական համակարգի կայացմանը (որն ի թիվս ավանդական այլ հարցերի արդյունավետ լուծումների) կխթանի նաև երկրի տնտեսության բարելավմանը (իշխանության

նկատմամբ հեղինակության բարձրացմանը և ներդրումների զարգացմանը և այլն) դատական իշխանության հեղինակության բարձրացմանը և իրավունքի (իրավական օրենքի) գերակայության ապահովմանը:

Եզրակացությունում ներկայացվում է ատենախոսական աշխատանքի արդյունքները, որոնք հանգում են հետևյալին.

1. Դատական իշխանությունը ժամանակակից հայ հասարակության մեջ ամենաբարձր նորմատիվ իրավական մակարդակով՝ ՀՀ Սահմանադրությամբ ճանաչվել է որպես պետական իշխանության առանձին ինքնուրույն և հարաբերականորեն անկախ իշխանություն: Դա հազարամյա հայ հասարակության, իրավունքի և պետականության զարգացման օրինաչափ և իմաստավորված արդյունք է:
2. Որպես պետական իշխանության առանձին ճյուղ՝ դատական իշխանությունը նույնպես սահմափակվում է իրավունքով, մարդու բնական իրավունքներով և բանականությամբ: Միևնույն ժամանակ, դատական իշխնաությունը մարմնավորում է իրավունքը և հանդես է գալիս որպես «խոսող» կամ «կենդանի» իրավունք և որպես այդպիսին դատական իշխանությունը զարգացնում է իրավունքը, իրավական համակարգը՝ իր իրավամեկնողական դիրքորոշումներով:
3. Դատական իշխանությունը և իրավունքը (պոզիտիվ և բնական) զույգ (հարակից) կատեգորիաներ են, քանի որ դրանք առանց մեկը մյուսի անհնար է պատկերացնել և գոյություն ունենալ: Դատական իշխանությունը նույն «իրավունքն» է ինստիտուցիոնալ հարթակում, այս իմաստով է դատական իշխանությունը «խոսող իրավունք», «կենդանի իրավունք»: Երբ դատական իշխանությունը դուրս գա «իրավականության» դաշտից, այն կդառնա զուտ «հարկադրանքի գործիք» (ինչպես ցույց է տալիս անցյալի և ներկայի համաշխարհային փորձը) և կդադարի այդպիսի իշխանության կրողի պատվից ու հեղինակությունից: Հետևաբար պետության և դատական իշխանության գոյության և զարգացման ուղեծիրը իրավականության դաշտն է, առանց որի արդարացված չէ պետության և դատական իշխանության գոյությունը:
4. Դատական իշխանությունը և արդարադատությունը հարակից հասկացություններ են, սակայն ծավալային իմաստով և բովանդակային առումով խիստ տարբերվում են: Դատական իշխանությունը համեմատաբար նոր հասկացական երևույթ է, այն գոյություն ունի մոտ 300 տարի (ձևավորվել է XVII-XVIII դարերում բուրժուադեմոկրատական հեղափոխությունների ժամանակաշրջանում) և տեսականորեն ու գործնականում

հիմնավորվել է իշխանությունների բաժանման ու հավասարակշռման կոնցեպտուալ տեսության համատեքստում:

Ի տարբերություն «դատական իշխանություն» հասկացական եզրույթի, «արդարադատությունը» թե ձևական և թե բովանդակային առումով առաջացել և գործել է հազարամյակներ, կարելի է պնդել, մինչև պետականության, վաղ պետականությունների և ձևավորված-զարգացած պետությունների օրոք մինչև մեր օրերը:

Սակայն որքան էլ «տարիքային» տարբերությունը մեծ է, այդուհանդերձ արդարադատությունը դատական իշխանության «կցորդը» դարձավ և հանդիսացավ ու շարունակում է հանդիսանալ դատական իշխանության հիմնարար գործառույթը, այսինքն՝ թե ծավալային, թե իմաստային և թե բովանդակային առումով դատական իշխանություն ավելի լայն հասկացական կատեգորիա է ներառում ոչ միայն արդարադատության գործառույթը, այլև՝ նորմաստեղծ վերահսկողական, կազմակերպչական, ֆինանսատնտեսական, դատական քաղաքականության իրականացման գործառույթները:

5. Արդարադատությունը՝ բազմադարյան պետական ու իրավական զարգացման արդյունք է, որն արտացոլում է այդ ինստիտուտի զարգացման առանձնահատկությունները, իշխող գաղափարական դիրքորոշումները հասարակության իրավական ավանդույթները: Առավել ընդհանրացված տեսքով արդարադատությունն արտացոլում է գտնում դատարանակազմության ու դատավարության հենքային սկզբունքներում: Գրեթե բոլոր պետությունների օրենսդրությունը նշում է, որ արդարադատությունը կարող է իրականացվել միայն դատարանի կողմից՝ հաստատված կանոնների համապատասխան՝ ժամկետներում, որ դատական գործերը պետք է դիտարկվեն անկախ ու անկողմնակալ դատավորների կողմից, որ դատարանը պետք է ձգտի սահմանի ճշմարտություն պահպանի արդարության, անձի իրավունքների ազատությունն օրենքի առջև հավասարության, դատավարության հրապարակայնության պայմաններում, որ դատական որոշումները պետք է հիմնվեն սահմանադրության, օրենքների ու դատական նախադեպերի նորմերի հիման վրա, սակայն բոլոր պետություններում այս կամ այն չափով խեղաթյուրվում են նշված սկզբունքները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում: Եվ անհրաժեշտություն է առաջանում շտկել, վերացնել թերացումները և կատարելագործել առկա կառուցակարգերը և ընթացակարգերը:
6. Դատարանի և դատական մարմինների համակարգի փաստացի առկայությունը դեռևս չի ենթադրում իրական դատական անկախ և ինքնուրույն իշխանության գոյության մասին, քանզի դատական իշխանությունը, որպես պետական իշխանության առանձին ճյուղ.

օժտված պետք է լինի պետական իշխանությանը բնորոշ ընդհանուր հատկանիշներով և միայն իրեն առանձնահատուկ բնութագրիչներով: Այս առումով, դատական իշխանությունը, ինչպես օրենսդիր և գործադիր իշխանությունները, քաղաքական և պետահիրավական բարդ երևույթ է՝ օժտված ինքնուրույն կազմակերպչական կառուցվածքով, միայն իրեն բնորոշ գործառնական լիազորություններով և խնդիրներով Դատական իշխանությունը նաև կենդանի օրգանիզմ է, որի մեխանիզմի աշխատանքը պետք է համահունչ լինի հասարակության ընկալումներին, սպասելիքներին, պահանջներին:

7. Դատական իշխանությունը՝ պետական գործունեության և հասարակական կյանքի այն ոլորան է, որտեղ իրավական պետության գաղափարներն առավել վառ են արտահայտվում, հետևաբար իրավական պետության կառուցման անհրաժեշտ նախապայմաններից է անկախ դատական իշխանության կայացումը:

Իրավական պետությունում դատական իշխանության անկախության կանխադրույթը ենթադրում է դատական նորմաստեղծ և վերահսկողական գործունեության և առկայության և դրանց արդյունք հանդիսացող նաև դատական ակտերի հեղինակության բարձրացում, դրանք որպես իրավունքի աղբյուրի ճանաչում, ինչպես նաև օրենքների և այլ նորմատիվ ակտերի լեգալ մեկնաբանության իրավասության և դատական հայեցողության ընդունում:

8. ՀՀ դատական իշխանության անկախությունն ապահովելու և արդարադատության արդյունավետությունը բարձրացնելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հրատապ միջոցառումները.

ա) ՀՀ դատահիրավական ոլորտում տարիներով կուտակված հիմնախնդիրները, հնարավոր կլինի լուծել բացառապես համակարգված և խորքային բարեփոխումների արդյունքում,

բ) պետք է ստեղծվի մրցակցային արդարադատության, այս առումով անհրաժեշտ է նվազագույնի հասցնել դատարանների նախագահների սուբյեկտիվ հայեցողությունը,

գ) դատական գործերի բաշխումը պետք է լինի էլեկտրոնային համակարգի միջոցով,

դ) դատական համակարգում անհրաժեշտ է ներդնել արդարադատության էլեկտրոնային և մշտադիտարկման համակարգեր,

ե) դատական համակարգում արդարադատության արդյունավետությունը բարձրացնելու և դատավորների մասնագիտական որակական հատկանիշները պարզելու համար՝ անհրաժեշտ է ներդնել ողջամիտ

ժամկետում գործերի քննության մեթոդիկան, ինչը հնարավորություն կտա նաև հասցեական գնահատելու դատավորներին:

զ) Դատական իշխանության նկատմամբ հանրության վստահության պակասը վերացնելու համար անհրաժեշտ է արդարադատության համակարգում վերականգնել արդարությունը և հավասարությունը բոլորի համար: Այս առումով անձը պետք է պաշտպանված լինի իր սեփական երկրում և պետք է երախավորված լինի մարդու համար արդար ու անաչառ արդարադատությունը:

9. Դատական իշխանության համակարգում առկա արատավոր երևույթները և թերացումները վերացնելու համար անհրաժեշտ է նոր հայեցկարգային մոտեցումներ մշակել և կիրառել, մասնավորապես՝ արդարադատության որակը միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ ձևավորել նոր արժեհամակարգով պայմանավորված անկախ դատական համակարգ, որտեղ կբացակայեն տարաբնույթի բացասական դրսևորումները և համապատասխան երաշխիքներ կստեղծվեն ապագայում դրանց վերստին դրսևորումները կանխարգելու համար: Այս տեսակետից պետք է ապահովել նաև դատական որոշումների կանխատեսելիությունը և դրանց անխոցելիությունը իրավական տեսանկյունից:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրատարակումներում.

1. ԱԼՈՅԱՆ ԼԵՎՈՆ ԳԱԳԻԿԻ <<Հայաստանի Հանրապետության դատական իշխանության զարգացման արդիական հիմնախնդիրները>>, <<Մենագրություն>>, Երևան, Ստեփանյան Պրինտ, 2024 ՀՏԴ 340 ԳՄԴ 67.0Ա.327 ISBN 978-9939-9328-3-5:
2. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<ОБВИНЯЕМЫЙ В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ>> НАУКА И ОБРАЗАВАНИЕ, сборник статей XXIII АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ, Международной научно-практической конференции, Состоявшейся 20 августа 2019г. в г. Пенза МЦНС, ст. 188.
3. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<ПОНЯТИЕ СВОБОДЫ МЫСЛИ>> <<ИНТЕРНАУКА>> научный журнал и 16/145/ часть 3 май 2020, ст. 66.
4. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОЕ ЗАКРЕПЛЕНИЕ СВОБОДЫ РЕЛИГИИ, МЫСЛИ, СОВЕСТИ>> Научный журнал РИНЦ «Обществознание и социальная психология» Выпуск Issue №12-1 (55) 2023, ст. 394.

5. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<РЕФОРМЫ СУДЕБНОЙ СИСТЕМЫ>> Журнал «Научный аспект» №8-2024
6. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<ФУНКЦИОНАЛЬНЫЕ ПОЛНОМОЧИЯ СУДЕБНОЙ ВЛАСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ>>, Международный журнал гуманитарных и естественнуй наук.
7. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<Теоретико-концептуальные подходы к совершенствованию правосудия и повышению эффективности>>, МЕЖДУНАРОДНЫЙ ЖУРНАЛ ГУМАНИТАРНЫХ И ЕСТЕСТВЕННЫХ НАУК, сентябрь 2024 г. № 9-1 (96), ст. 265.
8. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<Система гарантий независимости судебной власти Республики Армени>>, МЕЖДУНАРОДНЫЙ ЖУРНАЛ ГУМАНИТАРНЫХ И ЕСТЕСТВЕННЫХ НАУК, №9-5 (сентябрь) 2024г.
9. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<Понятие, сущность и характеристика судебной власти>>, Метаданные статьи индексируются в реферативной базе данных научных публикаций РИНЦ. Журнал «Научный аспект», Т. № 6, 2024. Т. 17–122.
10. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<СОВРЕМЕННЫЕ КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОДХОДЫ СУДЕБНОЙ ВЛАСТИ>>, РИНЦ, Электронный научный журнал «Архонт» Выпуск № 9(48). 2024 г., ст. 29-31.
11. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<СУДЕБНАЯ ВЛАСТЬ В ПРАВОВОМ ГОСУДАРСТВЕ>>, РИНЦ, Электронный научный журнал «Архонт» Выпуск № 10(49), 2024 г., ст.111-114.
12. ԱԼՈՅԱՆ ԼԵՎՈՆ ԳԱԳԻԿԻ <<Դատական իշխանության ընդհանուր հայեցակարգային մոտեցումները>>, РЕГИОН И МИР научно-аналитический журналтом XVI, № 1 (56), 2025 ՀՏԴ՝ 342.56; EDN: GKLNGI DOI: 10.58587/18292437-2025.1-53, ст.53.
13. ԱԼՈՅԱՆ ԼԵՎՈՆ ԳԱԳԻԿԻ <<Սահմանադրական արդարադատության որոշ հիմնախնդիրներ>>, РЕГИОН И МИР, научно-аналитический журналтом XVI, № 2 (57), 2025 ՀՏԴ՝ 342.4; EDN: IVXGIO DOI: 10.58587/18292437-2025. 2, ст. 53-55.
14. ԱԼՈՅԱՆ ԼԵՎՈՆ ԳԱԳԻԿԻ <<ՀՀ դատական իշխանության գործառութային լիազորությունները>> РЕГИОН И МИР научно-аналитический журнал том XVI, № 2 (57), 2025, ст. 61-64.
15. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<Судебная система – важнейшая опора национальной государственности>> ВАК РИНЦ, Юридическая Наука N 4, 2025, ст. 8-11.
16. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<Состояние системы судебной власти РА на современном этапе развития общества>>, ВАК РИНЦ Юриднческая Наука N 4, 2025, ст. 58-62.

17. АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ <<Судебный прецедент в системе общего права>>, ВАК РИНЦ Юридическая Наука N 5, 2025, ст. 8-13.

АЛОЯН ЛЕВОН ГАГИКОВИЧ

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ СУДЕБНОЙ ВЛАСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ СУДЕБНО-ПРАВОВЫХ РЕФОРМ: ТЕОРЕТИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ

Диссертация на соискание учёной степени кандидата юридических наук по 12.00.01» – «Теория и история государства и права, история политико-правовых учений» Защита состоится 01-ого ноября 2025 года в 11:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете. (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина, 123).

РЕЗЮМЕ

Актуальность данной диссертационной работы обусловлена современным состоянием судебной власти в Республике Армения. В связи с этим следует отметить, что накопленные за долгие годы проблемы в сфере судебной и правовой системы Республики Армения могут быть решены только в результате глубинных и системных реформ. По нашему мнению, для обеспечения качественных изменений в судебно-правовой сфере необходимо в первую очередь оценить текущее состояние, проанализировать существующие проблемы правосудия и предложить научно обоснованные подходы и практические рекомендации для их надлежащего решения (14,18). Для исправления сложившейся ситуации требуется проведение комплексных и системных изменений. Следовательно, поиск фрагментарных решений в контексте системных преобразований судебной власти является ошибочным. Судебная система представляет собой один из важнейших опор национальной государственности, поскольку именно в судах находят своё разрешение все споры и проблемы, возникающие как в политической и социальной плоскости, так и в отношении законодательной или исполнительной власти, в сфере экономики и бизнеса, в рамках борьбы с коррупцией, а также в повседневной жизни. С этой точки зрения судебная власть является столь же важным институтом на пути построения зрелой демократии, как законодательные органы или справедливые и свободные выборы. В связи с этим отметим, что в настоящее время нашей стране удалось провести справедливые и прозрачные выборы в соответствии с международными стандартами, сформировать

легитимные законодательные и исполнительные органы, однако не удалось создать столь же легитимную, независимую и заслуживающую доверия судебную систему (6,8). Мы полагаем, что для решения этой сложной задачи необходим системный подход, свободный от излишней поспешности и хирургических (фрагментарных) решений. На сегодняшний день перед нашей страной стоят следующие вызовы: устранение последствий войны, обеспечение законности, демократических ценностей, независимой судебной власти, свободной и справедливой экономической конкуренции.

О системных реформах национальной судебной системы свидетельствует также «Стратегия судебных и правовых реформ Республики Армения на 2022–2026 годы», утверждённая постановлением Правительства РА №1133-L от 21 июля 2022 года. Согласно этой Стратегии, судебно-правовые реформы являются приоритетом государственной власти и направлены на повышение независимости и беспристрастности судебной системы, уровня доверия общества к судам, снижение загруженности судов, улучшение качества предоставления общественных услуг, совершенствование законодательства в сфере гражданского и гражданского процессуального права, внедрение единой системы управления электронной юстицией, а также другие меры, необходимые для развития судебно-правовой системы Республики Армения (4,7). Следовательно, научное исследование насущных проблем судебной власти является объективной необходимостью и особенно актуально в наше время. Состояние научной разработки темы: В отечественной юриспруденции вопросы, касающиеся судебной власти, были рассмотрены в работах следующих учёных: С.С. Аветисян, Г.Г. Арутюнян, Г.Б. Даниелян, Г.С. Газинян, Р.Г. Петросян, и других.

Различные аспекты судебной власти также подробно исследованы российскими правоведами: Т.Е. Абов, Е.Б. Абрасимов, Л.И. Алексеев, Б.В. Андреев, В.И. Анишин, П.Д. Баранов, В.Г. Есарабов, А.Д. Бойков, Н.С. Бондарь, А.А. Власов, Л.А. Воскобитов, С.И. Герасимов, К.Ф. Гуценко, И.Ф. Дем Исаев, Л.М. Карнов и др. Данное исследование отличается от вышеперечисленных работ следующими особенностями: во-первых, диагностируется текущее состояние судебной системы; во-вторых, предопределяются пути совершенствования судебной власти, повышения её эффективности и тенденции дальнейшего развития (24,48,52). Высоко оценивая значительный вклад вышеуказанных авторов в научное освещение вопросов судебной власти и правосудия, мы тем не менее считаем, что настоящее исследование также призвано внести свой скромный вклад в научный анализ и интерпретацию рассматриваемой проблемы, а именно — рассматривать судебную систему как живой организм в её динамическом развитии, исследовать судебную власть с сугубо научной и практической точки

зрения (без политических спекуляций) и объективно интерпретировать вопросы, связанные с судебной деятельностью и её результатами (46,78,151). Цель и задачи исследования заключаются в разработке принципиально новой, комплексной и теоретически обоснованной концепции судебной власти как особого социально-правового института, в научном обосновании проблемных вопросов судебной власти, а также в определении наиболее эффективных инструментов разрешения социально-правовых споров на основе правовых норм, национального и международного законодательства и судебных прецедентов. Кроме того, цель исследования включает обоснование необходимости обновления понятийно-категориального аппарата теории государства и права в отношении судебной власти, разработку научно обоснованных предложений по совершенствованию законодательства и судебной практики, а также повышение эффективности их применения.

ALOYAN LEVON GAGIK

PROSPECTS FOR THE DEVELOPMENT OF THE JUDICIAL AUTHORITY OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF JUDICIAL AND LEGAL REFORMS: A THEORETICAL AND LEGAL ANALYSIS

Competition for the degree of Candidate of juridical sciences in the specialty of 12.00.01 – "Theory and History of State and Law, History of Political and Legal Doctrines"

The defense of the the dissertation is scheduled for 1 th November 2025, at 11:00 AM in a panel session of the Professional Council No. 063 of Jurisprudence of Russian-Armenian University of the of the Republic of Armenia Higer Education and Science Committee (Address: 123 Ovsepa Emina Street, Yerevan, 0051).

SUMMARY

The relevance of this dissertation is conditioned by the current state of the judicial authority in the Republic of Armenia. In this regard, it can be stated that the

long-standing problems accumulated over the years in Armenia's judicial and legal system can only be resolved through profound and systemic reforms. In our view, in order to ensure substantial qualitative changes in the judicial and legal sphere, it is first necessary to assess the current situation, analyze the existing problems of justice, and propose scientifically grounded approaches and practical recommendations for their effective resolution (14,18). To correct the current state of affairs, it is essential to implement comprehensive and coordinated reforms. Therefore, seeking fragmented solutions in the context of systemic judicial reforms is incorrect. The judicial system is one of the main pillars of national statehood, as all disputes and problems whether political, social, legislative or executive, economic and business-related, within the context of anti-corruption efforts, or even everyday matters ultimately find their resolution through justice, i.e., in the courts. From this perspective, we believe that the judiciary is just as crucial for the development of a consolidated democracy as the legislative body or fair and free elections. In this regard, it should be noted that while Armenia has managed to hold fair and transparent elections in accordance with international standards and to form legitimate legislative and executive authorities, it has not yet succeeded in establishing an equally legitimate, independent, and trustworthy judiciary (6,8). In our opinion, solving this difficult issue requires a systematic approach, free from unnecessary haste and surgical (fragmented) solutions. At present, Armenia faces serious challenges such as overcoming post-war consequences, ensuring legality, democratic values, an independent judiciary, and free and fair economic competition. Systemic reforms in the national judiciary are also reflected in the "Judicial and Legal Reforms Strategy of the Republic of Armenia for 2022–2026," approved by the Government of the Republic of Armenia through Decree No. 1133-L dated July 21, 2022. According to this Strategy, judicial and legal reforms are a top priority of state power, aimed at strengthening the independence and impartiality of the judiciary, increasing public trust in the courts, reducing court workload, improving the quality of public services, enhancing civil and civil procedural legislation, implementing a unified electronic justice management system, and taking other steps essential for the development of Armenia's judicial and legal system (4,7). In summary, we can state that at the current stage of national statehood development, the re-evaluation and reinterpretation of state-legal institutions is of particular importance. One of the primary tasks is to find appropriate solutions to the issues related to the further improvement of judicial authority. Therefore, the scientific study of urgent problems of judicial power is not only objectively necessary, but also especially relevant today. Scientific research on the topic: In Armenian legal scholarship, issues related to the judiciary have been examined by the following scholars: S.S. Avetisyan, G.G. Harutyunyan, G.B. Danielyan, G.S. Ghazinyan, R.G. Petrosyan, G.M. Badiryan, M.G. Khachatryan, D.M. Khachaturyan, A.G. Vagharshyan, S.A. Dilbandyan, A.S. Ghambaryan, A.K. Arakelyan, E.R.

Danielyan, A.M. Mirzoyan, S.A. Terzikyan, A.S. Nazaretyan, G.R. Khandanyan, Yu.V. Hayrapetyan, J.H. Hayrapetyan, V.H. Hovhannisyan, T.S. Ghazanchyan, among others. Various aspects of judicial authority have also been extensively studied by Russian legal scholars such as T.E. Abov, E.B. Abrasimov, L.I. Alekseev, B.V. Andreev, V.I. Anishin, P.D. Baranov, V.G. Esarabov, A.D. Boikov, N.S. Bondar, A.A. Vlasov, L.A. Voskobitov, S.I. Gerasimov, K.F and others. This study differs from the above-mentioned works in the following ways: First, it diagnoses the current condition of the judicial bodies; and second, it anticipates the paths to improve the system of judicial power, increase its effectiveness, and forecast its future development trends (24,48,52). While duly appreciating the substantial contributions of these authors to the scientific coverage of judicial and justice-related issues, we believe that this study also seeks to make its modest contribution to the scientific analysis and interpretation of the topic. Specifically, the judicial system is viewed as a living organism in its dynamic development; the judiciary is approached purely from scientific and practical perspectives (free from political exploitation); and issues related to judicial activity and outcomes are interpreted from an objective standpoint (46,78,151). The purpose and objectives of the study lie in the development of a fundamentally new, comprehensive, and theoretically grounded concept of judicial authority as a specific socio-legal institution. This includes the theoretical substantiation of key issues related to judicial power, as well as identifying the most effective legal tools for resolving socio-legal disputes based on legal norms, national and international standards, and judicial precedents. Furthermore, the goal includes justifying the need to update the conceptual and categorical apparatus of state and legal theory concerning judicial authority, formulating scientifically grounded proposals for the improvement of legislation and judicial practice, and enhancing their overall effectiveness.